ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/03

«23» ապրիլ 2019թ.

ք.Վայք

Վայքի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Թ. Ավետյանի, որը գործում է օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Վայք համայնքի կարիքների համար արևային ֆոտովոլտային համակարգերի նախագծման և կառուցման աշխատանքների կատարման պարտավորությունը** (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել ծրագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 15428640(տասնհինգ միլլիոն չորս հարյուր քսանութ հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վայք համայնքապետարան ՀՀ Վայք համայնք ք.Վայք Շահումյան 18 Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ. Հ/Հ 900342121036 ՀՎՀՀ 08913477 Համայնքի ղեկավար՝ Թ.Ավետիսյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	<<ՍՈԼԱՐ ԷՆԵՐԳԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹՅՈՆՍ>> ՍՊԸ Ք՝ Երևան Կորյունի փ. 8/4 Բանկը՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Հ/Հ 220483331215000 ՀՎՀՀ 02657859 ---------- /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«23 » ապրիլ 2019թ. կնքված
ՀՀ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/03 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
						Կատարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	45251100	Վայք համայնքի կարիքների համար արևային ֆոտովոլտային համակարգերի նախագծում և կառուցում	հատ	15428640	1	ՀՀ Վայոց ձորի մարզ ք. Վայք՝ Շահումյան փողոց 18, Լենինի փողոց 4, Ալավերդյան փողոց 54, Լենինի փողոց 1	Պայմանագրի կնքման օրվանից 62 աշխատանքային օր

Տեխնիկական բնութագիր

Ծրագրի անվանումը՝ Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում (ՎԱԷՀՔ)

Ծրագիրն իրականացնող՝ «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամ

Պատվիրատու՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, Վայքի համայնքապետարան

Իրականացման վայրը՝ Քաղաք Վայք, Վայոց ձորի մարզ, Հայաստանի Հանրապետություն (ՀՀ)

Առաջադրանքի անվանումը՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի վեց հանրային սպառողների համար չորս արևային ֆոտովոլտային համակարգերի կառուցում

Աշխատանքների տևողությունը՝ 62 աշխատանքային օր

Սույն առաջադրանքն իրականացվում է ՎԱԷՀՔ ծրագրի շրջանակում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից (80%) և Վայքի ու Սպիտակի քաաղաքապետարանների կողմից (20%): Ծրագրի նպատակն է աջակցել Սպիտակի և Վայքի քաղաքապետարաններին՝ մշակելու և փորձարկելու հանրային նշանակության ու բնակելի շենքերում էներգախնայողության կիրառելի և արդյունավետ մոդելներ՝ էներգաարդյունավետության բարելավման միջոցառումների իրականացմամբ և էներգիայի վերականգնվող աղբյուրների կիրառմամբ:

Առաջադրանքի նպատակն է Վայք քաղաքի չորս շենքերի տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր վեց հանրային սպառողների համար՝ ապահովելով դրանց միացումը էլեկտրամատակարարման ընդհանուր ցանցին և սպառողների ներքին ցանցին: Շենքերի և սպառողների մասին մանրամասները տրված են աղյուսակ 1-ում:

ՖՎ համակարգի հասցեն	ՖՎ համակարգին միացած սպառողները	ՖՎ համակարգերի դրվածքային հզորությունը
ՖՎ N1: Շահումյան փողոց 18	Սպառող N 1: Վայքի համայնքապետարան	19.2 կվտ
ՖՎ N 2: Լենինի փողոց 4	Սպառող N 2: Թիվ 1 մանկապարտեզ	2.2 կվտ
ՖՎ N 3: Ալավերդյան փողոց 54	Սպառող N 3: Թիվ 3 մանկապարտեզ	5.8 կվտ
ՖՎ N 4: Լենինի փողոց 1	Սպառող N 4ա՝ Մշակույթի տուն Սպառող No 4բ՝ Գրադարան Սպառող N 4գ: Արվեստի մանկական դպրոց	2.2 կվտ 1.3 կվտ 12.2 կվտ
Ընդհանուր հզորությունը		42.9կվտ

Նախատեսվում է իրականացնել ֆոտովոլտային համակարգերի նախագծում և տեղադրում Վայք քաղաքի չորս հանրային շենքերի տանիքների վրա՝ վեց սպառողների համար՝ համաձայն աղյուսակ 1-ի: Արևային ՖՎ համակարգի տեղադրման հետ կապված այս առաջադրանքը ներառում է հետևյալ հիմնական

աշխատանքների իրականացումը Ծառայություն Մատուցողի կողմից.

ա) ՖՎ համակարգերի նախագծում և ծավալաթերթ-նախահաշվի պատրաստում, աշխատանքների պլանավորում, ճարտարագիտական (ինժեներական) լուծումների ներկայացում, էլեկտրական և կառուցվածքային գծագրերի պատրաստում, ՖՎ համակարգերի կոմպոնենտների գնում/մատակարարում, համակարգերի կառուցում/մոնտաժում, մասնագրերի պատրաստում, փորձարկման արդյունքների վերլուծություն, գործարկում և թերությունների վերացման աշխատանքներ մեկ տարվա երաշխիքային ժամկետում: Ծառայություն մատուցողը աշխատանքներն ընդունելուց հետո պատասխանատու կլինի շահագործման և պահպանման ծառայությունների համար մեկ տարվա ժամկետով: Ինվերտորների համար երաշխիքային ժամկետին ներկայացվող մինիմալ պահանջներն են առնվազն 5 տարի, ինվերտորները պետք է լինեն հողանցումով, աշխատանքային արդյունավետությունը պետք է լինի 98%-ից ոչ պակաս իսկ ՖՎ վահանակների համար 15 տարի: Յուրաքանչյուր ինվերտորի հետ պետք է տրվի բաշխիչ արկղ, որտեղ տեղադրված կլինեն համապատասխան ապահովիչներ փոփոխական հոսանքի շղթայի համար:

բ) ՖՎ համակարգերի մոնտաժման ընթացքում սպառողների կողմից նշանակված ՖՎ համակարգերի հետագա շահագործման և սպասարկման համար պատասխանատու անձանց կողմնորոշիչ ուսուցում՝ այն համատեղելով ՖՎ համակարգերի տեղադրման գործնական աշխատանքների ժամանակ պրակտիկ ցուցմունքներով: Ուսուցումները պետք է կազմակերպվեն բոլոր 4 կառույցների ՖՎ համակարգերի համար պատասխանատու անձանց համար:

գ) Արևային համակարգերի անխափան աշխատանքի համար երաշխավորել թերությունների վերացման մեկ տարվա երաշխիքային ժամկետ, ինչպես նաև նախագծման փուլում ֆիքսել ՖՎ համակարգերի կողմից էներգիայի արտադրության տարեկան կանխատեսվող ծավալները (կվտ/ժ), որը կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ կնքված պայմանագրով:

դ) ՖՎ համակարգերի հանձնում-ընդունումից հետո պայմանագրով սահմանված մեկ տարվա թերությունների վերացման երաշխիքային ժամկետում յուրաքանչյուր երեք ամիսը մեկ իրականացնել համակարգերի աշխատանքի ստուգում և իր հաշվին վերացնել հայտնաբերված թերությունները: Ըստ անհրաժեշտության Ծառայություն Մատուցողը պետք է իրականացնի նաև արտահերթ ստուգումներ:

ե) ՖՎ համակարգերի հանձնում-ընդունումից հետո թերությունների վերացման ժամկետում եռամյակը մեկ կատարել համակարգերի արտադրած էլեկտրական էներգիայի և նախագծով նախատեսված քանակների համադրում՝ ներկայացնելով տարբերությունների հիմնավորված պատճառները: Եթե ի հայտ գա, որ նախագծով նախատեսվածից քիչ էլեկտրաէներգիա է արտադրվում տեխնիկական պատճառներով կամ Ծառայություն Մատուցողի թույլ տված սխալների պատճառով, ապա Ծառայություն Մատուցողը պետք է իր հաշվին կատարի անհրաժեշտ շտկումները: Էլեկտրական էներգիայի արտադրության գնահատված ակնկալվող ծավալներից որևէ շեղում պետք է փոխհատուցվի Ծառայություն Մատուցողի կողմից, եթե այն տեղի է ունեցել Ծառայություն Մատուցողի մեղքով: Շեղումների համար Ծառայություն Մատուցողի պատասխանատու լինելու դեպքերը և դրա համար փոխհատուցման ձևերը կսահմանվեն պայմանագրով՝ Պատվիրատուի և Ծառայություն Մատուցողի փոխադարձ համաձայնությամբ:

Ֆոտովոլտային համակարգի կառուցումը ներառում է հետևյալ աշխատանքները.

- Տանիքների կոնստրուկցիայի փորձագիտական ուսումնասիրություն: Նախքան ՖՎ համակարգերի մոնտաժումը Ծառայություն Մատուցողը պետք է ապահովի Վայքի համայնքապետարանի, Մշակույթի տան, Թիվ 1 մանկապարտեզի, Թիվ 3 մանկապարտեզի տանիքների կոնստրուկցիայի ամրության ուսումնասիրություն և ներկայացնի տեղադրվող արևային ֆոտովոլտային կայանների կառույցների տանիքների համապատասխան հատվածների ամրության և դրա առավելագույն բեռնվածքի փորձագիտական գնահատականը, դրանց վրա ֆոտովոլտային համակարգերի տեղադրման տեխնիկական հիմնավորումը և անվտանգ լինելը: Այս նպատակով անհրաժեշտ է իրականացնել կառույցների տանիքների ու հիմնական կարկասի հետազոտում և կրող կոնստրուկցիաների վիճակի գնահատում՝ ՀՀՇՆ նորմատիվային դրույթների համաձայն, որպեսզի ՖՎ վահանակների կամ սպասարկող անձնակազմի ծանրության պատճառով առաջացած հավելյալ զանգվածի չափաբաժինը լինի թուլատրելի սահմաններում: Ծառայություն Մատուցողից կպահանջվի լիցենզավորված կազմակերպության միջոցով մանրամասն հետազոտել ՖՎ համակարգի զանգվածի և քամու բեռնվածքները և արդյունքները ներկայացնել Պատվիրատուին: Ըստ անհրաժեշտության, Ծառայություն Մատուցողը պետք է ներկայացնի կարկասի ուժեղացման նախագիծ և գործողությունների պլան:
- Աշխատանքների պլանավորում և նախագծում: Ծառայություն Մատուցողը պետք է ներկայացնի հիմնական աշխատանքների իրականացման հաջորդականությունը և ժամանակացույցը: Նա պետք է պատրաստի մանրամասն տեխնիկական նախագիծ՝ պայմանագրով սահմանված ժամանակահատվածում, ապահովի համակարգերի կառուցվածքային կոմպոնենտների ընտրությունը, ճարտարագիտական և կոնստրուկտորական գծագրերի պատրաստումը, ճարտարագիտական և կառուցման պլանների պատրաստումը, համակարգերի կառուցման համար թույլտվությունների ձեռքբերումը, ինչպես նաև պլանավորման, նախագծման, գործարկման և էլեկտրական ցանցերի ենթակայաններին միացման աշխատանքները:
- Նախապատրաստական աշխատանքներ և մատակարարում: Ծառայություն Մատուցողը պետք է իրականացնի տեղանքի նախապատրաստումը (ներառյալ համակարգերի տեղակայման տանիքների

հետազոտությունը), արևային ՖՎ համակարգերի կառուցման, փորձարկման, գործարկման և էլեկտրացանցին միացնելու համար պահանջվող բոլոր ֆոտովոլտային վահանակների, ինվերտորների, էլեկտրական լարերի և դրանց առնչվող կառուցվածքային և մեխանիկական կոմպոնենտների և այլ սարքավորումների մատակարարումը և տեղափոխությունը:

- Մոնտաժում/կառուցում: Ծառայություն Մատուցողը պետք է իրականացնի ֆոտովոլտային ամբողջ համակարգի մոնտաժումը և կառուցումը, բոլոր նախնական փորձարկումները, համակարգերի տեղադրման աշխատանքների կառավարումը և վերահսկողությունը, աշխատուժի ապահովումը, բոլոր սարքավորումների փուլային փորձարկումն ու գործարկումը և արևային համակարգերի միացումը էլեկտրական ցանցին:
- Կազմակերպական, իրավական հարցեր և թույլտվություններ: ՖՎ համակարգերի կառուցման և գործարկման ժամանակ Ծառայություն Մատուցողը պետք է կազմակերպի էլեկտրական հոսանքի մատակարարումը, աջակցի Պատվիրատուին պետական կանոնակարգող մարմիններից և էլեկտրամատակարարման հարցերը կարգավորող համապատասխան տեսչություններից ձեռք բերելու թույլտվություններ, ինչպես նաև էլեկտրամատակարարման ցանցի թույլտվությամբ ապահովելու հոսանքի գծերի միացումը, համակարգերի գործարկումն ու փորձարկումները:
- Փորձարկում, գործարկում, հանձնում-ընդունում և շահագործում: ՖՎ համակարգերի փորձարկման, գործարկման, նրանց շահագործման ու սպասարկման համար անհրաժեշտ պահեստամասերն ու տեխնիկական ուղեցույցները սպառողներին տրամադրելուց հետո կիրականացվի արևային համակարգերի հանձնում-ընդունում Ծառայություն Մատուցողի և Պատվիրատուի միջև:
  - Արևային վահանակներ: Արևային ֆոտովոլտային համակարգերի յուրաքանչյուր վահանակի փաստացի դրվածքային հզորությունը պետք է կազմի ոչ պակաս, քան 0.320 կՎտ: Պոլիկրիստալ տիպի արևային վահահանակներ՝ առնվազն 17% արդյունավետությամբ և ջերմային դեգրադացիայի 0.40 %/C գործակցով: Արևային վահանակների ալյումինե հենակների ամրությունը պետք է նախատեսված լինի 26մ/վ քամու արագության համար, հենակները պետք է հողանցված լինեն: Պետք է օգտագործվեն զրահապատ, բարձր խոնավության ներքո աշխատող փոփոխական հոսանքի մալուխներ (մալուխ մետաղական (բրոնյա) (AI) 4x35մմ2), իսկ տեղադրումը՝ հողի տակ առանց գոֆրոի :
-
- Ծառայություն Մատուցողը պետք է մանրամասն տեղեկություններ ներկայացնի առաջարկվող համակարգերի և դրանց տարրերի արտադրողականության և տեխնիկական բնութագրերի ցուցանիշների վերաբերյալ, այդ թվում՝
    - արևային վահանակների պարամետրերի վերաբերյալ՝ համաձայն Ստանդարտ Թեստավորման Պայմանների,
    - ինվենտորների պարամետրերի և մասնագրերի վերաբերյալ
    - մոնտաժման համակարգի պարամետրերի, տիպի և չափսերի վերաբերյալ
    - օգտագործվելիք մալուխների և միակցիչների պարամետրերի վերաբերյալ

Տեղադրվող ՖՎ համակարգերի ընդհանուր դրվածքային հզորությունը պետք էլինի 42.9կվտ, որը որոշվել է աղյուսակ 2-ում ներկայացված էլեկտրականության ծախսի և պահանջարկի տվյալների հիման վրա: Տեղադրվող ՖՎ համակարգերը կարող են ունենալ նախատեսվածից քիչ ավելի հզորություն, եթե այն պայմանավորված է ՖՎ վահանակի հզորությամբ կամ այլ հիմնավոր տեխնիկական պատճառով (ստվերով պայմանավորված կորուստները, դիրքի փոփոխությունը, տարածքը և այլն): Այնուամենայնիվ, ցանկացած պարագայում ՖՎ համակարգերի հզորությունը չի կարող պակաս լինել աղյուսակ 1-ում նշված հզորություններից: Ցանկացած դեպքում, սահմանված հզորությունից որևէ շեղում պետք է նախապես համաձայնեցվի Պատվիրատուի հետ:

Ծառայություն մատուցողը պետք է ՖՎ համակարգի հզորությունը և նախագիծը կազմի այնպես, որ ապահովի մաքսիմալ տարեկան էներգաարտադրություն մինիմալ ներդրումային ծախերով: Յուրաքանչյուր սպառողի համար համակարգի ծրագրային սիմուլյացիան պետք է ներկայացվի Պատվիրատուին, որը Քաղաքապետերի Դաշնագրի Աջակցող թիմի և ՎԱԷՀՔ ծրագրի թիմի կողմից դրանք հաստատվելուց հետո պետք է պատրաստվեն համակարգերի տեխնիկական նախագծերը: Այս նախագծերը ևս պետք է հաստատվեն Քաղաքապետերի Դաշնագրի Աջակցող թիմի և ՎԱԷՀՔ ծրագրի թիմի կողմից՝ նախքան դրանց տեղադրումն սկսելը: Այնուհետև, տեղադրման սխեման պետք իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի համակարգի բոլոր կոմպոնենտների պատշաճ հասանելիություն:

Ստորև՝ Աղյուսակ 2-ում ներկայացված է էլեկտրական էներգիայի ամսական ծախսը (կվտ/ժ) չորս համայնքային կառույցներում տեղակայված վեց հանրային սպառողների կողմից. Վայքի համայնքապետարան, Մշակույթի տուն, Գրադարանում, Մանկական արվեստի դպրոցում, Թիվ 1 մանկապարտեզում և Թիվ 3 մանկապարտեզում:

1. Ակնկալվող արդյունքները

Առաջադրանքը կատարելուց հետո ակնկալվում են հետևյալ արդյունքները.

- Վայքի համայնքապետարանը, Մշակույթի տունը, գրադարանը, Արվեստի մանկական դպրոցը, թիվ 1 և

թիվ 3 մանկապարտեզները կունենան արևային լիովին գործող ֆոտովոլտային համակարգեր՝ վերը նշված կարողություններին և տեխնիկական պահանջներին համապատասխան:

- Նշված հաստատությունները (սպառողները) կունենան անձնակազմ, որոնք կունենան ֆոտովոլտային համակարգերն սպասարկելու բազային գիտելիքներ և կարողություններ:

2. Իրականացման ժամկետը

Ծառայություն Մատուցողը պետք է ներկայացնի առաջադրանքը կատարելու ժամկետը և աշխատանքների իրականացման մանրամասն ժամանակացույց: Ծառայություն մատուցողը իր ներկայացրած իրականացման պլանում պետք է նախատեսի 10 աշխատանային օր՝ Քաղաքապետերի Դաշնագրի Աջակցող թիմի և ՎԱԷՀՔ ծրագրի թիմի կողմից ծրագրային սիմուլյացիան վերանայելու համար և 10 աշխատանքային օր տեխնիկական նախագիծը վերանայելու համար: Աշխատանքների ավարտը կհաստատվի հանձնման-ընդունման արձանագրությամբ՝ վավերացված Պատվիրատուի, Ծառայություն Մատուցողի և «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի ստորագրությամբ և կնիքով:

Առաջադրանքը կիրականացվի հետևյալ քայլերով.

Քայլ 1 – Ծառայություն մատուցողը կներկայացնի նախագծի փաթեթը՝ ներառյալ տանիքի տեխնիկական վիճակի հետազոտման մասին հաշվետվությունը, փորձագիտական եզրակացությունը և ծրագրային սիմուլյացիայի հաշվետվությունը՝ 15 աշխատանքային օր:

Քայլ 2 – Նախագծի փաթեթը կվերանայվի Քաղաքապետերի Դաշնագրի Աջակցող թիմի և ՎԱԷՀՔ ծրագրի թիմի կողմից՝ 10 աշխատանքային օրում:

Քայլ 3 – Ծառայություն մատուցողը կկատարի բոլոր անհրաժեշտ փոփոխությունները և կներկայացնի փոփոխված նախագիծը՝ 7 աշխատանքային օրում:

Քայլ 4 – ՔԴ Աջակցող թիմի և ՎԱԷՀՔ Ծրագրային թիմի կողմից տեխնիկական նախագիծը վերջնականապես կվերանայվի 10 աշխատանքային օրում:

Քայլ 5 – Նախագծի վերջնական փաթեթը կպատրաստվի վերջնական դիտողությունների հիման վրա՝ 5 աշխատանքային օրում:

Քայլ 6 – Ծառայություն մատուցողը պետք է ավարտի ֆոտովոլտային համակարգերի տեղադրումը՝ 15 աշխատանքային օրում:

Ծառայություն մատուցողը չի կարող տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգերը, եթե տեխնիկական նախագիծը կատարված փոփոխություններով հանդերձ չի հաստատվել ՔԴ Աջակցող խմբի և ՎԱԷՀՔ ծրագրի կողմից: Թույլտվությունը կարող է հաստատվել ՎԱԷՀՔ ծրագրի ղեկավարի կողմից գրավոր կամ էլեկտրոնային նամակով: Առանց թույլտվության կատարված աշխատանքների համար Պատվիրատուն չի կարող վճարել Ծառայություն մատուցողին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վայք համայնքապետարան ՀՀ Վայք համայնք ք.Վայք Շահումյան 18 Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ. Հ/Հ 900342121036 ՀՎՀՀ 08913477 Համայնքի ղեկավար՝ Թ. Ավետյան /ստորագրություն/ Կ.Տ	<<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹՅՈՆՆՍ>> ՍՊԸ Ք՝Երևան Կորյունի փ. 8/4 Բանկը՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Հ/Հ 220483331215000 ՀՎ/ՀՀ 02657859 /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«23» ապրիլ 2019թ
ՀՀ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/03 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45251100	Վայք համայնքի կարիքների համար արևային ֆոտովոլտային համակարգերի նախագծում և կառուցում	2622869	5091451	7714320	10337189	12805771	15428640	15428640

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վայք համայնքապետարան
ՀՀ Վայք համայնք ք.Վայք Շահումյան 18
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121036
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար՝
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՍՈԼԱՐ ԷՆԵՐԳԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹՅՈՆՍ>> ՍՊԸ
Ք՝Երևան Կորյունի փ. 8/4
Բանկը՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220483331215000
ՀՎ/ՀՀ 02657859

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 23» ապրիլ 2019թ. կնքված
ՀՀ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/03 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանում	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« 23» ապրիլի 2019թ. կնքված
ՀՀ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/03 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն